

# ԱՆՑԵԱԼԻՑ

(ՊԱՏԿԵՐ)

## Գ. ՄԱՍՏԻՏԻ

1866 թ. շոքամառուայ ամիսներին գիշատիչ կատուի նման անլսելի, բայց արագ ու հաստատ քայլածքով դադտագողի մտենում էր մեզ անիծեալ հիւրը—խողերան՝ Սարսափը օրէցօր սաստկանում էր, թէև մեր մօտաւոր շրջակայքում դեռ ևս խողերային ոչ մի դէպք չէր պատահել։ Հազար ու մի՝ մէկ-մէկից աւելի տաղնասպիւշ լուրեր կաշճակի արագութեամբ տարածւում էին քաղաքի բոլոր անկիւններում։ Ամենքը դողում էին, զանազան բեկկամաւոր դեղեր էին ձեռք բերում և, գլուխները հետզհետէ աւելի ու աւելի կորցնելով, միմիայն խողերայի մասին էին մտածում ու խօսում։ Այդ տաղնասպի շնորհիւ համարեա բոլորն էլ հիւանդացան. բոլորի ջղերը քայքայւել էին, երեսները դեղնել ու փոս ընկել, աշխուժութիւնը կորել, իսկ զանազան դեղերի ու հազար ու մի նախապահականող կաթիլների ի շար գործ դնելը,—որ վախկոտութեան սովորական հետեանքն է,—շատ-շատերին ահազին փնասներ պատճառեց։ Սարսափից գլուխները կորցրած՝ մարդիկ ծայրայեղութեան մէջ էին ընկնում, որին իհարկէ շատ նպաստում էր հասարակութեան տգիտութիւնը, և այդպիսով այդ դեղերը օգուտ տալու տեղ՝ փնասում էին։ Օրինակ՝ ազնւականների առաջնորդը, որ տաք-տաք սուլի մէջ անգամ մի-մի հացի գդալ ինչ-որ պատենտաւոր դեղ էր ածում, իւր այդ ընախազգուշութիւններովը՝ այնտեղ հասցրեց, որ կարգին հիւանդացաւ, իսկ բանկիր Չելմանը այնքան ափիւն էր գործա-

ծում, որ թունաւորեց և կը մեռնէր, եթէ որ չը փրկէին: Ձը գիտեմ ինչու մի տարօրինակ կարծիք էր տարածուել, թէ խոյերան ողբից ըմպելիքներինց վախենում է, և ամենքը սխեցին հազար ու մի տեսակ «железудочная» ու «травники» կոչող խմիչքներ և կոնսերւէր էր վայր դրում: Խմացնում էին մինչև անգամ տիկիներին ու օրիորդներին, համոզուած լինելով, որ այդ «օգտակար» է... Բժշկական վարչութեան տեսուչը, որ մի ծեր մարդ էր՝ բուրգոնեան քթով և տանել չէր կարողանում ոչ ջահէլ բժիշկներին, ոչ էլ «առողջապահութիւն» խօսքը, անդադար ասում էր ամենքին՝

— Մի կէս բաժակ լյաւ կոնսերւէր, չետոյ մէկ-երկու բիւմկա թոնդ ուտ, վրայիցն էլ կարմիր գինի... նրանից չետոյ էլ դարչին ու պղպեղ... մի շնչումը կոնսերւէր, — ես մարդ չը լինեմ, թէ ինչ խոյերա-մոյերա լինի մէջներդ, դուրս չը դայ, կորչի: Հէնց հոտիցը կը վախենայ խեղճը, կը կորչի... Հաստատ խօսք եմ ասում... Ինչ ուզում են թող մեր նոր դուրս եկած բժիշկները ասեն... խոյերայի դէմ կուելու դրանից լաւ միջոց չը կայ:

Եւ «կոնսում էին», շատ զօռ էին կոնսումս, — մի շնչումը... Ամէնքի բերնից այգալիսի «կուլի» հոտ էր փչում ու մարդի շշմացնում...

Մարիա Լուսինայի սալոնումն էլ դադարեց սովորական ուրախ կեանքը... Սկզբում նա ուզում էր փախչել արտասահման, բայց այդ մտադրութիւնից պէտք է ձեռք քաշէր, որովհետև վերջին անգամ Պարիզ գնալու համար վերցրած պարտքերը դես չէր վճարել ու ցանած արտերի երեսը պատկանում էր պարտատէրներին, իսկ ժլատ ամուսինն էլ չէր համոզուում նոր պարտք անելու: Մէկ մտքովը անց կացաւ գնալ իրանց տոհմական կալածքը, բայց այդ միտքն էլ անիրապօրծելի դուրս եկաւ: Այնտեղ վաղուց անրնակ, անտիրական թողած տան առաստաղը կաթում էր, տախտակամածը փտել էր, դռներից ու պատուհաններից մի քանիսը փեղկեր չունէին, մօտակաջքում ոչ բժիշկ կար, ոչ դեղատուն, իսկ գիւղացիք ապրում էին վերին աստիճանի հակառողջական պայմաններում, որ իհարկէ այժմ երկիւղալի էր: Կամայ-ակամայ Մարիա Լուսինան պէտք է մնար քաղաքում, բայց նա մոռացաւ իւր պիքնիքները, ուսու-

ները, երեկոյթները, որոնց ժամանակ այնքան հրապուրիչ կերպով փայլում էին նրա մարմարանման թովիչ ուտերը, տխրական սև շոր հագաւ և ժամ չէր անցնում, որ նւագուն ու վշտահար տեսքով, որը այնքան սաղ էր գալիս նրա «blonde mélancolique» շնորհալի կերպարանքին, չը վերադառնար դեղատնից ահագին կապոցներով բերելով հետը նոր-նոր ճախապահպանող» ու պատենաւոր դեղեր: Նրա շքեղ վարդագոյն հիւրասենեակում ամ բրի փոխարէն կարթուրեան թթւատուի հոտ էր կանգնած, կապերտակալը (ШИФОНЬЕРКА) զարդարում էին զանազան կաթիլներ պարունակող սրւակներ, վարդագոյն փայտէ սատափազարդ հիանալի շարկադարանը (ЭТАЖЕРКА) ամբողջապէս բռնւած էր Ֆլանելով ու Ֆրանսիական մանանեխի սպեղանիներով (ГОРЧИЧНИКЪ) իսկ սեղանի վրայ, որ մինչև օրս զարդարում էին միայն անգլիական կիպտէկներ <sup>1)</sup>, այժմ ցցւած էին «Բորգո»-ի ու «հարիւր աւազակների» քացախի ռամկական շիշեր: Բժիշկ Կոթինին այդ բոլորը այն աստիճան ծիծաղելի էր թւում, որ նա իւր սովորութեան համաձայն առանց քաշելու բարձրաձայն ծիծաղում էր...

Երեկոյ էր, այն սքանչելի երեկոներից մէկը, որ լինում են միշտ մայիսի վերջերքին օրհնւած հարաւում: Պատշգամբի բաց դռնովը ու պատուհաններովը պարտէզիցը ներս էր փչում յասմիկների ու յափրուկների բուրմունքը և սպիտակ ակացիաների հրաշալի հոտը, որ՝ ինչպէս շատերն ասում են՝ սաստկացնում է մարդու աչքի բքի փայլն ու պայծառութիւնը: Նոր մայր մտած արևը դալարի, պատերի ու մարդկանց դէմքերի վրայ վարդագոյն սոււեր էր տարածում, որի մէջ ամեն ինչ այնքան խաղաղ երջանկութեան տպաւորութիւն էր գործում, որ մինչև անգամ Մարիա Լեոնայի օխուր սև հաշուսոր կորցրել էր իւր դաժանութիւնը... Մարիա Լեոնան նոր էր տուն վերադարձել նոր տաղնապիչ լուրերով և ճախապահպանողական դեղերի նոր պաշարով սրւակների ու արկղիկների մէջ, որ այժմ համալսփ կարգով դարստում էր...

— Այս եթեր (ЭФИРЪ) է, — ասում են, սիրտը խառնելիս օգ-

<sup>1)</sup> Շքեղ պատկերներով զարդարւած հրատարակութիւն:

նում է... Այս հեղուկն էլ պէտք է վառել, ծխել, հիւանդութեան  
թոյնը ոչնչացնում է... Այս էլ... այս էլ... Ախ այս թոյն է, պէտք  
է հեռու տեղ դնել:

Բժիշկը ծիծաղից թուլանում էր:

— Է այժմ, Մարիա Լեոնիա, անյաղթելի արմադա <sup>1)</sup> ունէք  
ձեր տանը... Խոլերան սկի քիթն էլ չի կոխիլ ձեր սենեակ-  
ները...

Լասժ լուրերից վատ տրամադրութեան մէջ ընկած ու վրդով-  
ւած Մարիա Լեոնիան քիչ էր մնում բարկանար բժշկի վրայ...

— Դուք հօ բացի ծիծաղելուց ու ամեն բան հերքելուց ոչինչ  
չէք անում: Ել ինչի բժիշկն էք, եթէ որ բժշկականութեան հա-  
ւատ չէք ընծայում...

— Բժշկականութեան ես հաւատում եմ, — ծիծաղելով պատաս-  
խանեց Կոստինը, — և հէնց այդ է պատճառը, որ ձեզ խորհուրդ եմ  
տալիս իղուր չը քայքայել՝ ձեր առողջութիւնը հազար ու մի ան-  
պէտք միջատութեաներով ու կաթիլներով և չապականել սենեակների  
մաքուր օդը զանազան բաներ ծխելով...

— Ինչ է, ձեր առողջապահութեան համաձայն չը պէտք է նա-  
խազգուշութիւններ ձեռք անել:

— Ընդհակառակը, Մարիա Լեոնիա, պէտք է... Եւ եթէ ամենքը  
հետեւէին առողջապահութեան խրատներին ու նախազգուշանային,  
հանրախոս չէր էլ լինիլ Իսկ այժմ, հաւատացէք ինձ՝ ամենից կա-  
րևորը սրտապնդութիւնը, մաքրութիւնն ու կանոնաւոր կեանքն է:

— Ե՛հ, դուք միշտ ձեր...

— Այո, ես միշտ միևնոյնն եմ կրկնում... Հանրախոս մեր ազի-  
տութեան, մեր բազմադարեան կեղտոտութեան ու անշարժութեան  
պատիժն է... Եթէ որ զիտութեան ձայնը ազդեցութիւն ունենար  
մեր կեանքի կազմակերպութեան վրայ, եթէ որ առաջաւոր մարդկանց  
ձայնը...

Լուս, լուս, լուս, — կոկետաբար ընդհատեց նրա խօսքը Մարիա  
Լեոնիան. — Գնանք սեղանատուն, զնանք... Թէչը արդէն պատրաստ  
է և մեզ սպասում են...

<sup>1)</sup> Մեծ նաւատորմիդ:

Բայց յամառ կոժինը այնու ամենայնիւ ճանապարհին խօսքը վերջացրեց.

—Այն ժամանակ, հաւատացած եղէք, հանրախտ ասած բանի հոտն անգամ չէր լինիլ մեզնում:

Այդ հրաշալի երեկոյեան Մարիա Լուսինան ու հիւրերը մինչև անգամ ծիծաղում էին կարծես առ վայրկեան մոռանալով տագնապիչ լուրերը: Կոմսուհին շնորհալի կերպով պատմում էր թիկնոցների ամենանոր ֆառնը, — Երկու հատ հանգոյց (бантъ), mesdames, երկու հանգոյց, — մէկը՝ առաջից, մէկը՝ յետևից, — բանկիրը ինչ որ՝ շըշըւացնելու ձայնով ասում էր պետութեան օգաի մասին, ազիւտանալը բերրը վեր էր քաշում, իսկ ազնւականների առաջնորդը ըստ սովորականին կատաղի կերպով պաշտպանում էր ներկայ հասարակական կազմակերպութեան հիմունքները: Բոլորին էլ մի տեսակ քաջալերում էր ուրախ ու համարձակ բժշկի ներկայութիւնը. տագնապը կարծես անհետացել էր... Բայց այնու ամենայնիւ երբ որ թէչի ժամանակ մի աման հիանալի հասած մորի (клубника) բերցին, ոչ մէկը ձեռք չը մեկնեց զէպի ամանը և միայն որկրամով առաջնորդը տխուր-տխուր այնպիսի ազահ հայեացք զցեց նրա վրայ, կարծես աչքերովն ուզում էր ուտել:

—Ախտոս, — հոգոց քաշեց նա լիակուրծք:

Կոժինը նորից ծիծաղեց.

—Մորից վախենում էք: Քիչ է մնացել շաքներիցդ էլ վախենաք: Այ քեզ բան: Տասնեակ տարիներ ապրել էք ամենասարսափելի պայմանների մէջ, ոչնչից չէք վախեցել, անհանդիստ չէք եղել թէ ձեր ոյժերն ու առողջութիւնը արմատիցը քայքայւում են, իսկ այժմ անվնաս պտուղից վախենում էք... էյ, պարոններ, պարոններ, մենք ինքներս ենք խոլերա պատրաստել մեր զլխին, վերջապէս օլէտք է հասկանանք այդ...

Առաջնորդը յօնքերը վեր քաշեց ու զննող հայեացքով նայեց նրա վրայ:

—Այդ ինչ մտքով էք ասում, կարելի է իմանալ...

—Այս բոլորէս, — անվրդով կերպով պատասխանեց կոժինը մորի լցնելով իւր ամանի մէջ, — Երբ որ աշխարհումս չքաւորների թիւը շատ է շատանում, այն ժամանակ անհրաժեշտ կերպով հանդէս է

գալիս մահւան ողին ձեռքին բռնած հանրախա կոչւող սուրը և սկսում է սրբել չափազանց խիտ շարքերը...

—Սխալուում էք, — տաք-տաք վրայ բերեց կոմսուհին, — հիւանդու-թիւնը հարուստ-աղքատ չի ջոկում, ում պատահում է՝ տա-նում է...

Կոժինը ականաց ծիծաղեց:

—Այդ նրանից է, կոմսուհի, որ հիւանդութիւնը մարդկանցից արդարադատ է...

Ինքնատէր կոմսուհին վիրաւորեց, կարմրեց ու մի քիչ կծե-լով ասաց.

—Գիտէք, բժիշկ, եթէ ես չ'իմանայի թէ որքան բարի էք դուք, կը կարծէի թէ դուք ուրախ էք որ խոլերա է մեզնում...

Կոժինը դադարեց ժպտալուց և թեթևակի շարժեց ջոնքերը:

—Եւ կը սխալւէիք, կոմսուհի, — վրայ բերեց նա մի քիչ հեղ-նական եղանակով: Ես էլ ձեզ պէս խոլերան չարիք եմ համարում, բայց ոչ անձնական չարիք, այլ՝ ամենքի համար... Եւ դիտէք, ինչ պէտք է ասեմ ձեզ: Այդ չարիքը, ինչպէս գրեթէ ամեն մի չարիք, ունի և իւր հակառակ կողմը...

—Լաւ կողմը:

—Այո:

—Ի՞նչ լաւ կողմ, — հարցրեցին բոլորը միասնաձայն:

Մարիա Լեոնիան, որ չէր կարողացել դիմանալ և դայթակղւե-լով բժշկի օրինակից սկսել էր մորի ուտել, բայց հաս-հաս վերց-նելով ամանից ոսկէ գլխաքորոցով հաւատացած լինելով, որ այդ-պէս աւելի քիչ վտանգաւոր կը լինի, — զարմացքիցը մինչև անգամ գլխաքորոցը մի կողմ դրեց:

—Ինչո՞ւն է այդ լաւ կողմը:

—Նրանում, որ մարդիկ նրա շնորհիւ բարոյապէս լաւանում են, — շարունակեց խօսքը Կոժինը մի քիչ խիտ ձայնով... Սրտները մի քիչ փափկում է և ականաց հոգս են տանում ուրիշների մա-սին... Այ օրինակ դուք, կոմսուհի, խոլերայի ոյժը նւազեցնելու համար հազար բուբլի նւիրեցիք քաղաքում չքաւորների համար սեղանատուն բանալու նպատակով և այժմ ինքներդ էք կառավա-րում այդ սեղանատունը... Մարիա Լեոնիան ուշադրութիւն դարձրեց

իւր տան գեղունայարկում կենողների դրութեան վրայ և խողերայի վախից տւեց նրանց ամեն բան ինչ որ անհրաժեշտ է նրանց: Նա մինչև անգամ հրաժարւեց նրանց բնակարանների վարձից այն պայմանով որ այդ փողը նրանք գործ դնեն իրանց սնունդը բարուքելու վրայ: Խեղճ կոչկակարի բնակարանը այժմ ախտահանուած է, ներք տւած ջրի հաճար թորանոց (KYSY) է շինուած, իսկ երեխաները սպիտակ հացով կաթ են խմում... Տեսնում էք ինչքան բարեգործեր է անել տւել խողերան... Երևի Սոնեան այժմ ուրախութիւնից պար է զալիս...

Այդ լսելով Մարիա Լեոֆեան, որ վերաւորել էր բժշկի խօսքերից ու պատրաստել էր նրան մի լաւ կծել, վախեցած նայեց չորս կողմը՝ աչքերով փնտռելով իւր աղջկան: Աղջիկը նստած էր սենեակի մի անկիւնում և նրա գունատ դէմքի վրայ վառ փայլում էին նրա մեծ, բարի աչքերը, որոնցով նա կարծես նոյնպէս ինչպէս և ականջներով ազահաբար հետևում էր իւր բարեկամի—բժշկի ամեն մի խօսքին:

Բժիշկը նոյնպէս աչքը դարձրեց այն կողմը, ուր նայում էր Մարիա Լեոֆեան:

—Սոնեա, ուրախ էք, որ ձեր բարեկամների վրայ հոգս են տանում, հարցրեց նա նկատելով նրան մթնում:

Ուրախ է արդեօք Սոնեան, որ հոգս են տանում իւր բարեկամների, կոչկակարի՝ Կաստեա ու Վարեա երեխաների վրայ: Ի հարկէ ուրախ է, ուրախ՝ ի բոլոր մանկական սրտէ: Այդ պարզ երևում է թէ նրա երեսի կարմրելուց, թէ նրա հեղ ու բարի աչքերի փայլելուց, երբ որ նա ամօթխածութեամբ պատասխանեց ասոյն:

—Դէ, վեր կաց զնա այստեղից, տաղնապալից ասաց Մարիա Լեոֆեան: Գնա պատշգամբը Ֆրէյլէյնի մօտ, ուր ուզում ես զնա, միայն թէ այստեղ մի նստիլ... Դու որ չը լսես մեր խօսակցութիւնը ոչ ոքից ոչինչ չի պակսիլ. դու գիտես որ ես այդպիսի բաներ չեմ սիրում...

Երբ որ Սոնեան դուրս թուաւ սենեակից, Մարիա Լեոֆեան շարունակեց խօսքը նոյն տաղնապալից ձայնով.

—Շատ վախենում եմ աղջկանս համար... Իւր տարիքի հետ

համեմատած՝ չափազանց զարգացած է և սաստիկ զգայուն, սաստիկ ջղաջին է: Իսկ նրա այդ մտերմութիւնը կօշկակարի երեսաների հետ ինձ սաստիկ զայրացնում է, բժիշկի, և դուք ի դուր էք քաջալերում նրան... Ես խտրու արգելել եմ, որ չը համարձակի այսուհետև բարեկամութիւն անել նրանց հետ... Եսնում էք, յանդուգն բժիշկի:

Ասաց նա ու շարածձի կերպով մատը թափ տւեց բժշկի վրայ:

Մութը աւելի էր պատել, — օդում զգացում էր արդէն մօտալուտ հարաւային գիշերուան քաղցրութիւնը... Պարտէզի թաւ թփերի մէջից լսեցին սոխակի առաջին դայլայլիկները, առժամանակ լսեցին՝ կարծես հանգան, բայց չետոյ յանկարծ արագ-արագ և աւելի ուժգին հնչեցին: Մանգաղաձև նւազ լուսինը արդէն շողշողում էր ոսկեգոյն փայլով՝ դեռ ևս կիսաթափանցիկ մշուշի մէջ, իսկ նրա կողքին կարծես լողարանից դուրս գալով վառւեց մի փայլուն աստղ, որ փայլփլում էր ու կարծես մարդուս կանչում էր դէպի երկինք... Գունատ դէմքով ու մեծ ու հեղ աչքերով աղջիկը կանգնած էր պատշգամբում և մի տեսակ լարւած դրութեամբ ակնապիշ նայում էր թէ մոխրագոյն — կապուտակ մշուշին, թէ բարձրում փայլիող աստղին, թէ խաւարամած թփերին, որոնց մէջից լսում էին սոխակի դեղգեղանքները... Ֆրէյլէյնի մօտ նա չէր ուզում գնալ, Ֆրէյլէյնը շատ էր փնփնջում ու երբէք չէր պատասխանում նրա հարցերին, ասում էր, որ այդ հարցերը աւելորդ, դատարկ կամ թէ չէ՝ փոքրիկ աղջկայ չը վայելող հարցեր են... Իսկ նա սաստիկ փափագում է իմանալ ամեն բան... ամեն բան... և այն թէ ինչու ինքը չը պէտք է լսի մեծերի խօսակցութիւնը, և այն, թէ ինչու չը պէտք է սիրի Վոստեային ու Վարեային, ինչու նրանք՝ ինչպէս իւր մայրիկն ու Ֆրէյլէյնը ասում են՝ իւր թացը չեն, թէև նրանք էլ իրան նման երեսաներ են և բարի Ատուածը պատւիրել է սիրել ամենքին... Վերջապէս ինչ բան է այդ խոլերան, որի մասին բոլորն էլ իրանից թաքուն, կամաց, փրսփրսալով են խօսում, և որից բոլորը սաստիկ վախենում են, թէև նա, բժշկի ասելով, շատ բարիք է արել կամ անել տւել երեսա-

ների և աղքատների համար... Շատ վառվռուն, սուր մտքեր էին իրար զայլիս Սոնեայի փոքրիկ մանկական գլխում, շատ հարցեր էին ծագում և թէև այդ հարցերն ու մտքերը նրա գլխում չէին պարզում ու կանոնաւոր կերպով կարգի ընկնում, բայց նրա մանկական սրտի համար ամեն բան պարզ էր... Նրա սրտիկը անդադար բարակելով ասում էր, որ Կոստեան ու Վարեան այժմ կաթ ունեն խմելու, սպիտակ հաց ունեն ուտելու, որ նրանց հայրը այժմ տաք կերակուր ունի...

—Այդ դժւ ես, Վարեա, ասաց Սոնեան պատըշգամբի տակից շորերի խշխշոց լսելով ու կռացած՝ ուշադրութեամբ նայելով ներքևի մութ մշուշի մէջ:—Հա:

—Ես եմ,—խուլ ձայնով արտասանեց Վարեան դուքս զայով մշուշի մէջից՝ բերանը լիքը ու սպիտակ հացը ձեռքին:

—Ընթրիք ես անում, հա:

—Հա, մենք էլ այսօր թէյ խմեցինք...

—Թէյ:

—Հա... Հայրիկն էր բերել մասնախմբից...

—Ի՞նչ մասնախմբից:

—Աղքատների համար որ կայ... հիմա որ խոլէրա է ընկել քաղաքը...

Վարեան սկսեց շուտ—շուտ շարժել ծնօտները, դժւարութեամբ կուլ տւեց բերնի հացը, շունչ քաշեց ու պատրաստում էր ինչ որ մի բան պատմելու. Սոնեան աւելի ցած կռացաւ, բայց այդ ժամանակ լսեց Մարեա Լեոնայի ձայնը:

—Սոնեա, Սոնեա,—գուռում էր մայրը, ով գիտի էլի փողոցային երեխաների հետ ես խօսում...

Սեղանատանը ամեն բան կերպարանափոխւեց... Քաղցր խօսակցութեան ամենալաւ ժամանակը, երբ որ բոլոր տիկիները միացած վրէժ էին հանում Կոթինից նրա յարձակումների համար, յանկարծ վախորած ներս վազեց բժշկական վարչութեան տեսուչը... Նրան նայողը իսկոյն կը հասկանար, որ ինչ որ սարսափելի վատ բան պէտք է պատահած լինի... Նա հեթհեթում էր ու թաշկինակով սրբում էր ճաղատ զանգի քրտինքը:

— Խօղէրան, հան, — միաձայն հարցրեցին նրան ամենքը և իսկոյն լռեցին:

Տեսուչը դրականաբար շարժեց գլուխը:

— Այտանդ, մեր քաղաքում:

— Այո, էլ կասկած չի կարող լինել... Մի անգամից հինգ մարդ... նշանակւած է մասնախմբի արտակարգ նիստ և ես եկել եմ կանչելու ձեզ, կոմունչի, և ձեզ, collega...

Պոժինը իսկոյն գնաց... Ամենքը վերցրեցին իրանց գլխարկները: Վախներիցը բոլորն էլ շտապում էին գնալ ծանօթներին հաղորդել այդ սարսափելի լուրը ու յետոյ թաք կենալ իրանց տանը, ուր ինչպէս նրանց թւում էր իրանք աւելի ապահով կը լինէին... Մարիա Լեոնան մնաց մենակ և այդ մենակութիւնը այժմ, աղմկալից խօսակցութիւնից յետոյ, աւելի էր վախեցնում նրան... Մոկները ծալւում էին, նա նստեց, ուզում էր լալ, բայց արտասուքը չէր գալիս: Ամենատաղնապալից բողոքներին նա սովորաբար ապաստանում էր մարդու առանձնասենեակը, բայց այժմ այդ էլ չէր կարող անել, — գեներալը գնացել էր մանեօւրներին... ըստ երևոյթին կատարեալ միայնակութիւնը և անօգնական դրութիւնը բոլորովին շշամացրել էին նրան... Վախիցը չուած աչքերով և դունաթափ՝ լարած սկանջ էր դնում նա խոր շուրջը տիրող խաղաղութեանը կարծես յուսալով լսել մի որ և է այնպիսի բան, որ հանէր նրան այդ թրմբած դրութիւնից: Աննպատակ, չոր հայեացքը ման էր ածում նա ամեն խորշ ու անկիւնում դարստած սրւակների ու արկղիկների վրայ և յանկարծ նրա մէջ ցանկութիւն ծագեց մի անգամից կուլ տալ այդ բոլոր դեղերը և փրկւել, անկասկած փրկւել ու բոլորովին ապահովւել... Ինչ որ մի ներքին ձայն շշնջում էր, թէ՛ եթէ այդ բոլոր դեղերը միասին նրա ստամոքսումը լինեն, նա այնուհետև կարող է բոլորովին աներկիւղ լինել... Բայց բարեբախտաբար Մարիա Լեոնան գլուխը դեռ բոլորովին չէր կորցրել... Նա ուշքի եկաւ, չիշեց Սոնեային և սարսափի այդ արհաւիրքից ազատելու համար ձայն տւեց աղջկանը:

— Ո՞րտեղ էիր, — հարցրեց նա հետզհետէ հանգստանալով աղջկայ գալուց յետոյ:

— Պատշգամբումը, մայրիկ...

Կենդանի ու մօտիկ մարդու խօսքերի հնչիւնները սիրտ տւեցին նրան... Նա ուշի ուշով ու հոգատարութեամբ նայեց աղջկան ոտից մինչև գլուխ և աւելի ու աւելի ազատելով իրան տիրած սարսափից, — թէև դեռ ևս լացը գալիս էր, — ասաց դողդոջուն ձայնով.

— Այժմ՝ քեզ լաւ պահիր, Սոնեա, խելօք կաց... Դու լսեցիր, աւելորդ է քեզնից թաքցնել, — խոչըրան հասել է մեր քաղաքը, իսկ խոչըրան չար ու չիմար մարդկանց չի սիրում: Ուրեմն բարի եղիր, լսում ես...

Սոնեան լսում էր և իւր մեծ ու բարի աչքերով տաղնապալից նայում էր մօր գունաթափ ու տխրած դէմքին: Մանկական նրբազգաց ականջը պարզ ըմբռնեց մօր ձայնի եղանակում նրան տանջող վիշտն ու խեղդած արտասուքը. Սոնեայի փոքրիկ սիրտը սկսեց աւելի սաստիկ բաբախել:

— Դէ, խելօք պահիր քեզ, Սոնեա...

Բաց պատուհանի միջով արդէն ներս էր նայում հարաւային մութ գիշերը... Մաղիկների բուրմունքը աւելի թանձրացել էր, սոխակի երգը աւելի բարձր էր հնչում, մուգ-կապուտակ երկնակամարից կարծես աստղեր էին թափւում երկրադնդի վրայ... Բարձր, գեղեցկակազմ կազամասինները խրում էին կապուտակ սփիւռի մէջ իբրև՝ մեղմ, անվրդով աղօթքի ժամանակ գետնից վեր պարզած հսկայական ձեռքեր... Քուն եղող երկիրը կարծես չիրաւի աղօթում էր սոխակի գեղգեղանքով և ծաղիկների բուրմունքով...

— Դէ, աղօթք արա, Սոնեա, ու դնա քնիր, ժամանակն է, բարձրաձայն ասաց Մարիա Լեոնեան, աշխատելով իւր սեփական ձայնով խեղդել սրտի տագնապն ու բուզը խեղդող արտասուքը:

Սոնեան չօքեց սրբի պատկերի առաջ և ձեռները իրար սեղմեց: — Բայց երէկւոյ պէս չ'անես, շատ երկար պէտք չէ աղօթել, ասաց Մարիա Լեոնեան՝ վախենալով որ աղջիկը նորից ընկնի կէսէքստազային դրոյթեան մէջ: Կարճ կերպով աղօթք արա այն մարդկանց համար, որոնց սիրում ես... Բարձր ձայնով աղօթիր...

Սոնեան շփոթւեց, — նա միշտ սովորութիւն ունէր աղօթել ցած ձայնով, այնպէս, որ միայն ինքն էր լսում: Նա աւելի ևս սաստիկ իրար սեղմեց ձեռները ու շարած՝ գլուխը կախ զցեց...

Ո՛ւժ համար աղօթք անէր, — եթէ Կոստեայի ու Վարեայի համար աղօթէր, մայրը կը բարկանար, — մտածում էր նա տարակուսած:  
— Դէ, սկսիր, Սոնեա...

Նա բարձրացրեց գլուխը, բարձրացրեց երկար արտևանունքները դէպի պատկերը և բարձրաձայն արտասանեց:

— Ասուած, պահիր, պահպանիր հայրիկին, մայրիկին... և... և...

Սոնեան կմկմաց ու դարձրեց դէպի մայրը իւր բարի աչքերը...

Այդ խոր ու սիրով լի հայեացքը, որ սրտադողած՝ պատասխանի էր սպասում, կարծես յանկարծ քնից սթափեցրեց Մարիա Լեոպնային: Ինչ որ մի բան վայր ընկաւ նրա վրայից և կարծես ինչ որ մի նոր բան ծագեց նրա մէջ...

— Ամենքին, ամենքին, Սոնեա, ասաց նա յանկարծ սաստիկ յուզւած ու արագ-արագ խօսելով: — Բոլոր մարդկանց, սիրուն աղջիկս, — և նրա ցամաք աչքերը ջրակալեցին:

— Խեղճիկ Վարեային էլ, մայրիկ:

Երեխայի երկչոտ, միամիտ ու տազնապալից հարցը առաջին րոպէում շփոթեցրեց Մարիա Լեոպնային: Նրա աչքերը չուեցին, գունատ այտերը ինչ որ պատճառով կարմրատակեցին... Նա կարծես նեղ դրուժեան մէջ ընկաւ այդ հարցից... Բայց յանկարծ այդ դրուժիւնն անհետացաւ և նրան ամբողջապէս տիրեց ու ջերմացրեց ինչ որ մի մեղմ, քնքոյշ, բոլորովին նոր զգացմունք, որի բարեբար ջերմութեան մէջ անհետ չբացան սարսափի բոլոր արհաւիրքները...

— Հն, բալիկս, բոլոր խեղճերին, հիւանդներին ու թշուառներին, ասում էր նա, ու նրա երեսովը արդէն գլորւում էին ջերմ, բարի արտասուքի կաթիլներ: Նրանց՝ մեզնից աւելի է պէտք քո աղօթքը, աղօթիր, աղօթիր նրանց համար, Սոնեա...

Եւ ոչո՛ք չ'ունենալով այլ ևս դիմանալու ու չը կամենալով դիմադրել հետզհետէ աւելի ու աւելի անմաքառելի կերպով իրան տիրապետող զզացմունքին, և մի տեսակ անասելի քաղցր մեղկութեամբ լիովին անձնատուր լինելով նրան, նա արագ չոքեց աղջկայ կողքին, երկու ձեռքով բռնեց նրա գլուխը և ջերմ համբոյրներ դրոշմելով նրա բարի սևաթուր աչքերին ու համբոյրները, արտասուքն ու խօսքերը իրար խառնելով, յուզւած շշնջաց:

—Միշտ այդպէս մաքուր եղիր, աղջիկս, և սիրիւ բոլորին, բո-  
լոր մարդկանց...

Երբ որ կոժինը կէս գիշերից շատ ուշ վերջապէս հիւանդա-  
նոցից տուն եկաւ և աչքի անցրեց Մարիա Լուիւայի ջղային, շտա-  
պող ձեռքով գրած նամակը, որով նա խորհուրդ էր հարցնում, թէ  
ինչպէս վարւէր ընդհանուր աղէտի դժար բոսկին և առաջարկում  
էր չքաւորներին համար իւր փողերն ու ծառայութիւնը, —նա,  
չը նայելով սարսափելի յոգնածութեանը, ժպտաց ամենաբնական  
ժպտով...

—Ճիշտ են ասել, որ դժբախտութեան ժամանակ մարդու մէջ  
զարթնում են քնած մարդկային զգացմունքները, մտածեց նա ինքն  
իրան խօսելով՝ երկրորդ անգամ նամակը աչքի անցնելիս՝ Տեսէք,  
ինչ լեզու է բանեցնում... Եւ բոլորովին անակնկալ կերպով, յան-  
կարծակի... Բայց այդ ոչինչ, —մարդու միայն դժբախտութեան  
ժամանակ կարելի է ճանաչել:

Եւ իւր չիշատակարանում իւր օգնականների թւին աւելցրեց  
Մարիա Լուիւային: